

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,
ղեկավարվելով Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի՝ Պայմանագրի դրույթներով,
գիտակցելով Համագործակցության մասնակից պետությունների ընդհանուր տնտեսական տարածքի արդյունավետ տրանսպորտային ապահովման օբյեկտիվ անհրաժեշտությունը, որը հիմնված է ապրանքների, ծառայությունների, աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժման վրա,
ձգտելով կիրառվող սակագներով խթանել Համագործակցության մասնակից պետությունների տնտեսությունների աճը,
գիտակցելով փոխընդունելի գործողությունների անցկացման կարելիությունը և անհրաժեշտությունը ուղեւորների և բեռների փոխադրման արդյունավետ ապահովման համար, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
"միջազգային հաղորդակցություն ԱՊՀ մասնակից պետությունների հետ"՝ բեռների և ուղեւորների փոխադրում սույն Համաձայնագրի մասնակից պետությունների միջև,
"միջազգային հաղորդակցություն երրորդ երկրների հետ"՝ բեռների և ուղեւորների փոխադրում սույն Համաձայնագրի մասնակից պետություններից դեպի երրորդ երկրներ և հետ:

ՀՈՂՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների սակագների տարածքի տակ հասկացվում է այն տարածքը, որտեղ գործում են միջազգային փոխադրումների համար սակագնային քաղաքականության ձեւավորման և կիրառման համաձայնեցված սկզբունքները:

ՀՈՂՎԱԾ 3

ԱՊՀ մասնակից պետությունների հետ միջազգային հաղորդակցության մեջ տրանսպորտային սակագների բնագավառում համաձայնեցված քաղաքականության մշակման նպատակով, Կողմերը համապատասխան մարմիններին կհանձնարարեն.
սակագների քաղաքականության կարգավորման համար միջոցառումների համալիրի մշակումը՝ ուղղված ապրանքների և ուղեւորների ազատ տեղաշարժի ապահովմանը,
հաշվի առնելով տրանսպորտային շուկայի կոնյուկտուրան և ճանապարհատրանսպորտային համալիրի տնտեսական շահերը և փոխհաշվարկների համակողմանի կարգավորման անհրաժեշտությունը, սակագների ձեւավորումը՝ ելնելով Կողմերի ազգային շահերից,
սակագների միջանցքների սահմանումը, հաշվի առնելով Կողմերի օրենսդրությունները, առանձին բեռների փոխադրման համար:
Երկաթուղային տրանսպորտի բնագավառում գործում է ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի 1996 թվականի հոկտեմբերի 18-ի՝ Որոշումը ԱՊՀ մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտում համաձայնեցված սակագների քաղաքականության հաստատման մասին հայեցակարգը:

ՅՈՒՐԱԿԱՆ 4

Որպես ԱՊՀ մասնակից պետությունների հետ միջազգային հաղորդակցության սակագների կառավարման համակարգի իրականացմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներ, Կողմերը.

մշակում են համապատասխան նորմատիվ-իրավական հիմք, որը կարգավորում է ԱՊՀ մասնակից պետությունների միջև միջազգային հաղորդակցության տրանսպորտի ծառայությունների գնագոյացման սկզբունքները,

իրականացնում են բեռների փոխադրման պայմանների դյուրացմանն ուղղված մաքսային քաղաքականություն:

ՅՈՒՐԱԿԱՆ 5

Յամաձայնեցված սակագների քաղաքականության ապահովման նպատակով Կողմերը ձեռնարկում են միջոցառումներ, ուղղված`

փոխհատուցման հիմունքներով փոխադրումների վճարմանը, այդ թվում` տրանսպորտի զարգացման համար բեռնատեղերի կատարած ներդրումների մասնակցության հաշվին, բեռնատար փոխադրումների շահագործման տրանսպորտային ծախսերի նվազեցմանը եւ ուղեւորատար փոխադրումների ծախսաձեւակմանը, որոնք ստացվում են ֆինանսական տարբեր աղբյուրների հաշվին,

հետադարձ վճարումների մեխանիզմի մշակմանը եւ համաձայնեցմանը:

ՅՈՒՐԱԿԱՆ 6

Յամաձայնեցված սակագների քաղաքականության ձեւավորումը իրականացվում է փուլերով` վճարման դրույքների ստեղծման, դրանց տարբերակման սկզբունքների, չափերի համաձայնեցման, կիրառման կանոնների միասնականացման ընթացակարգերի կատարելագործման նկատմամբ ընդհանուր մոտեցումների հիման վրա:

ՅՈՒՐԱԿԱՆ 7

Տրանսպորտային սակագների որոշման բնագավառում համաձայնեցված քաղաքականության համակարգող մարմիններն են Անկախ Պետությունների Յամագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհուրդը, Տնտեսական միության Միջպետական տնտեսական կոմիտեն, տրանսպորտի բնագավառում միջպետական (միջկառավարական) համագործակցության մարմինները, երկաթուղային փոխադրումների համար` Յամագործակցության մասնակից պետությունների երկաթուղային փոխադրողների սակագնային Յամաժողովը:

ՅՈՒՐԱԿԱՆ 8

Կողմերը միջոցներ են ձեռնարկում գնագոյացման բնագավառում ազգային օրենսդրական ակտերի ներդաշնակեցմանն ուղղությամբ:

ՅՈՒՐԱԿԱՆ 9

Կողմերն իրենց իրավունք են վերապահում անկախ եւ ինքնուրույն որոշելու սակագների քաղաքականության պայմաններն ու ձեւերը սույն Յամաձայնագրին չմասնակցող պետությունների հետ:

ՅՈՒՐԱԿԱՆ 10

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Յամաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

ՀՈՂՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար բոլոր անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար այն ուժի մեջ է մտնում ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈՂՎԱԾ 12

Բոլոր Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրին կարող է միանալ ցանկացած պետություն, որն ընդունում է սույն Համաձայնագրի նպատակներն ու սկզբունքները՝ ավանդապահին այդպիսի միացման փաստաթղթերի հանձնման միջոցով: Միացումը համարվում է ուժի մեջ մտած ավանդապահի կողմից նման միացման համաձայնության վերաբերյալ վերջին հաղորդագրությունը ստանալու օրվանից:

ՀՈՂՎԱԾ 13

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջև խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 14

Յուրաքանչյուր Կողմ կարող դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

ՀՈՂՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը գործում է այն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում: Այդ ժամկետի լրանալուց հետո Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա հինգ տարիների համար, եթե Կողմերը այլ որոշում չընդունեն:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1997 թվականի հունվարի 17-ին, մեկ բևորինակով՝ ռուսերեն: Բևորինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի նոյեմբերի 9-ից: